



Հայկական ժողովրդական հանելուկներ

ԵՐԿՆԱՅԻՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐ ՈՒ ԵՐԵՎՈՅԹՆԵՐ



1
Անսյուն տուն է,
Անծածկ տանիք,
Տունն այդ աշխարհներ տեղ
կանի:

6
Մի թխական կա բաց
դաշտում,
Լույսից փախչում, մութ է
պաշտում:

(Կերոսա գնդիկն ձկան)

2
Սփռոց է կապույտ,
ընդարձակ՝
Մերթ՝ անծաղիկ,
Մերթ՝ ծաղկազարդ:

7
Արծաթ ցանած կապույտ
դաշտով
Ո՛վ է անցնում գործն իր
պաշտող,
Մերթ նիհար է, մերթ՝ կլորիկ,
Սիրելին բուրբ բուրբի:

(Կնդիտ)

(Կրիակ դնող ձկան)

3
Նախշուն կարպետ՝
Ծալքեր չունի:
Հալվել ունի, ծալվել չունի:

8
Մի արտ ունեմ՝ սահման
չունի,
Ներսի ծաղկին՝ համբարք
չունի:

(Կնդիտն ստրուսա)

4
Մի ծառ գիտեմ մեծասաղարթ,
Կեսն՝ սպիտակ, կեսը՝ սև:
Կեսուն ոսկե հավքն է լողում,
Կեսուն՝ հավքերն արծաթե:

9
Մի անսահման առաստաղ է,
Մեջն ուլունքի ցուլք ու խաղ է:

(Կնդուսա ձկան վերջն ունի)

5
Մի տուն ունեմ՝ սյուն չունի,
Տունն է երկու թռչունի.
Մեկը՝ տաք, մեկը՝ պաղուկ,
Պահմտոցի են խաղում:

10
Մի գմբեթ է բարձրիկ ու լայն,
Շինված անսյուն ու անգերան,
Կանթեղներ ունի լուսավառ՝
Անվառելիք ու անպարան:

(Մխար, հարկուս գնդիկն)

11
Մի դաշտ կա՝ վարել չի լինի,
Քարերը համրել չի լինի:

(Կերոսա գնդիկն)

12
Ցերեկը ընում են,
Գիշերը՝ արթնանում:

13
Երեկոյան ծնվում են,
Առավոտյան՝ մահանում:

14
Արևն անցկացավ՝ ծաղկեցին,
Լուսը բացվեց՝ թառամեցին:

15
Հայտնվում են մութի հետ,
Փայտում՝ լուսը բացվելիս:

(Ինչուսա)

16
Աշխարհի հետ ծնվել է,
Աշխարհի չափ՝ ծերացել,
Բայց երեսուն օրից դեմ
Մինչև հիմա չի անցել:

17
Աղամից շատ ծնվել,
Աղամից էլ մեծ է,
Սակայն նա քառասունը
Երբեք չի ունեցել:

18
Այն ի՞նչն է, որ...
Այն ի՞նչն է, որ
Ապրում է ծիշտ երեսուն օր,
Մեռնում է ու կրկին հառնում
Միշտ էլ պայծառ ու
լուսավոր:

19
Անկոթ դդում՝ վերևից կախ:

20
Գիշերվա ջինջ լժի մեջ՝
Շողարձակող ոսկե շեղջ:

21
Մի հովիվ կա տարօրինակ՝
Հանդերից տուն չի գալիս,
Օր-ցերեկով պառկում, ընում,
Գիշերը է հոտը ման տալիս:

(Եկարծ)

22
Անծայր դաշտում երկու
հավք են,
Մեկը՝ պաղ, մյուսը տաք է:

23
Կապույտ ծովում քույր ու
եղբայր
Լողում են ու չեն հոգնում:
Ծովից երբեք դուրս չեն
գալիս,
Բայց աշխարհին շատ են
օգնում:

(Նաքոնա ձեռքի վրիթ)

24
Ցերեկով մեկը արթուն՝
Բյուրերն են ընած:
Գիշերով բյուրերն արթուն՝
Քնած է մեկը:

(Նաքոնա յիշուսա)

25

Գեղեցկուհին ոսկեծամ
Հայտնվեց կապույտ հայելում,
Եվ թուրը արթնացան
Երկրի թուր ծայրերում:

(Գեղեցկուհի փայծուկ)

26

Կապույտ ծովում՝ ոսկե
թոնրահաց:

(Կապույտ զննիկ)

27

Մի անուն է սիրով հնչող,
Անծայրածիր ճամփով թռչող,
Կյանքը նրան է պարտական
Ապրող, շնչող ամեն ինչով:

28

Երբ նա չկա, նվնվում ենք,
Հենց հայտնվի, թաքնվում ենք:

29

Կախվել է կտուրին մեր տան,
Չի թողնում իրեն մտիկ տանք:

30

Հրաշք մի ներկ է՝
Աշխարհն է ներկել,
Հայտնվելը նրա երգել են,
Կերգեն:

31

Այն ի՞նչն է, որ ստվեր չունի,
Բայց մեզ ստվեր է նվիրում:

32

Այն ի՞նչն է, ի՞նչ, որի գալով
Սկսվում է մեր օրը:
Այն ի՞նչն է, ի՞նչ, որի տակով
Անց են կենում թուրը:

33

Ձուրկ քնքշանքից իր հոր ու
մոր
Այդ ո՞վ է ծնվում ամեն օր:

(Պարծուկ)

34

Թուրն ընկավ ներս,
Բայց ծայն չեղավ:

35

Էստեղ պուպուզ,
Էստեղ պուպուզ,
Իրեն զգեց երդիկից դուրս:

36

Սրբել-հանել չի լինում,
Քշել-վանել չի լինում,
Պահը եկավ՝ ինքն իրեն
Քաշվում ու դուրս է գնում:

(Մշուկ ինձուկ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Յուրի Սահակյանի մշակմամբ

Երկնային մարմիններ ու երևույթներ	3
Մթնոլորտային երևույթներ	7
Ժամանակ	11
Երկիր և երկրային երևույթներ	15
Քուսական աշխարհ	20
Կենդանական աշխարհ	28
Թռչուններ	33
Միջատներ	37
Մարդկային կյանք	40
ճաշակելիքներ	48
Հագուստ-կապուստ	51
Կենցաղային իրեր և առարկաներ	53
Շենքեր, կառույցներ, շինհրապարակներ	61
Գիր, գիրք, գրեմական պիտույքներ	63

ՌՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Վոլոդյորեց Յուրի Սահակյանը

Երկինք, երկիր, քնության երևույթներ	65
Քուսական աշխարհ	71
Միջատներ, ձկներ	75
Թռչուններ, ընտանի և վայրի կենդանիներ	79
Մարդ և մարդային միջավայր	83

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ ՌՈՍ ՄԱՆԿԱԳԻՐՆԵՐԻՑ

Վոլոդյորեց Յուրի Սահակյանը

Քուսական աշխարհ	88
Միջատներ	90
Կենդանական աշխարհ	92